

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԻ «ԿՈՎԿԱՍԻ ԳԵՐԻՆ» ՊԱՏՄՎԱԾՔԻ
ԶՈՐՅԱՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻ
ՔԱՆԻ ՆԿԱՏՈՒՄՆԵՐ

Դեռևս 1911-ին Վահան Տերյանը «Ամունը կա, ամանունը չկա» հոդվածում խիստ կարևոր է համարում Լև Տոլստոյի գրական ժառանգության հայերեն թարգմանության խնդիրը¹։ Լև Տոլստոյի երկերը թարգմանել են հայ դասական գրողներից շատերը։ Դ. Թումանյանն, օրինակ, համաճարեղ գրողի մահվան տպավորության տակ «Հասկեր» մանկական ամսագրում տպագրում է նրա «Պառավ ծին» հուզիչ պատմվածքը²։ Խորհրդային շրջանում ռուս մեծ գրողի երկերը թարգմանաբար լույս էին տեսնում տարբեր տարիների։ Թարգմանիչների մեջ ամենածավալուն գործը կանտաբել է Ստեփան Զորյանը, որի գրչին են պատկանում նաև «Պատերազմ և խաղաղություն» ծավալուն երկի քառահատոր հայերեն թարգմանությունը։ Հայ դասական գրողը տարբեր տարիների թարգմանել է Լև Տոլստոյի վիպակներն ու պատմվածքները։ Դրանց շարքում են նաև «Կովկասի գերին» պատմվածքը, որը նախատեսված էր «Դպրոցական գրադարանի» համար։

Ստ. Զորյանը ոչ միայն մեծ տաղանդի տեր գրող է, այլև հմուտ թարգմանիչ։ Այս իրողությունն առավել տեսանելի է դառնում, երբ համեմատում ենք «Կովկասի գերին» ծավալուն պատմվածքի ռուսերեն բնագիրն ու հայերեն տարբերակը։ Հենց սկզբից ասենք, որ Զորյանի թարգմանությունը գեղարվեստական առումով շատ հաջողված է։ Նրա թարգմանությունը լիովին համապատասխանում է հայ դասական բանաստեղծ Դովհաննես Դովհաննիսյանի հետևյալ պահանջին. «Այնուհետև, չպետք է մոռանանք, որ մի գրական-գեղարվեստական գործի թարգմանության համար որքան ճիշտ թարգմանելն է կարևոր (այս պահանջը հարկավ Վերաբերում է ամեն տեսակ գրվածքների թարգմանության), նույնքան, գուցե և ավելի նշանակություն ունի, ինչպես թարգմանելը»³։

Ստեփան Զորյանը հաճախ Լև Տոլստոյի բնագրի բառերի հայերեն համարժեքներ է դրել թարգմանության մեջ։ Տոլստոյի «Պատմվածքներ, Կազակներ» ժողովածուի կազմող տիտղոսաթերթի դարձերեսի բովանդակային համառոտ բնութագրման մեջ (անոտացիայի) նկատում է. «Գրքում ներկայացված են Լ.Ն. Տոլստոյի պատմվածքներից մի քանիսը և «Կազակներ» վիպակը, որը միջնակարգ դպրոցի ծրագրով նախատեսված է միջին տարիքի դպրոցական-

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 218-221։

² Դ. Թումանյան, Երկեր, հ. 2, Երևան, 1958, էջ 324-325։

³ Դ. Դովհաննիսյան, Երկեր, Սիիստոլոյակ, Երևան, 1959, էջ 359։

ների արտադասարանական ընթերցանության համար: Տոված են դժվար հասկանալի բառերի բացատրություններ⁴: Լև Տոլստոյը ողջ պատմվածքում ունի միայն մեկ բառի բացատրություն՝ աուլ. «Аул-татарская деревня (Прим. Л.Н. Толстого)»⁵:

Ժողովածուն կազմողը բացատրել է հետևյալ բառերը՝ արշին - երկարության չափի միավոր, 1 արշինը = 71,12 սմ, մողա - Յյուսիսային Կովկասի գեղերից, ռաճտան - կապա, կանացի կամ տղամարդու զգեստ, մետալ - միայն մի շորով, ծուղա - անկրունկ չուստածն՝ ոլորուն քրով ոտնաման, տեփուր - միակտոր փայտե մեծ ափսե կամ սկուտեղ, մինառե - մահմեդական մզկիթներից կից աշտարակ, որի վրա բարձրանում են մոլլաները և բարձր երգածայն աղոթքով հավատացյալներին հրավիրում աղոթքի, խոնչա - յուրատեսակ սեղան, շատ կարճ ոտքերով, որպեսզի նստած վիճակում նրանից օգտվելը հարմար լինի, քիչի - յուղաբլիթ, դոռակ - ջրի փոքրիկ անոթ, կուլա, քաղիք - 1) բրդից կամ մազից պատրաստված հաստ կտոր, 2) հովվական անթև կապա, ջրածիկ - երկար ու նեղ կտուցով ջրի անոթ՝ լվացվելիս ջուր անելու համար, չեռեգակա - տղամարդու վերնահագուստ, որը հնում տարածված էր Կովկասի ժողովուրդների մոտ, սիմինդ - եգիպտացորեն, անել - բավականաչափ չթթված խմորից թխած հաց, սալա - ուռենու դալար ճյուղերից հյուսած լայն, բայց ոչ խոր մատուցարան, կեռց - կողով, չալմա - գլխածածկ, շաճթաւի - դեղձենի, ազան - (կրոն.) - մահմեդականների աղոթքի հրավեր, մատալ - եգծի:

Այս բառերը ուսերեն բնագրում բոլորովին այլ արտահայտություններ ունեն: Բերենք օրինակներ՝

Բնագիր - Уж поздно стало. Слышно - мулла прокричал⁶ (ստ. 277).

Հայերեն - Արդեն ուշ էր: Լսվեց, թե ինչպես մոլլան ալանը կանչեց (էջ 215):

Հայտնի է, որ օձօ բառը հայերեն թարգմանվում է զումակ⁷: Լ. Տոլստոյի բնագրում նույն պարբերության մեջ օձօ-ը կրկնվում է երկու անգամ, իսկ հայերեն թարգմանության մեջ Ստեփան Ջորյանը կատարել է փոփոխություն. մեկ անգամ գրել է զումակ, իսկ երկրորդ անգամ՝ փոխադրական սալեր.

Բնագիր - Собрались на зорьке о́бозы за крепость, вышли провожатые солдаты и тронулись по дороге. Жилин ехал верхом, а телега с его вещами шла в обо́зе (ստ. 265).

⁴ Լև Տոլստոյ, պատմվածքներ, Կազակներ, Երևան, 1987, էջ 2:

⁵ Л.Н. Толстой, Собрание сочинений в двенадцати томах, том IX, Москва, 1984, стр. 268.

⁶ Բնագրից և հայերեն թարգմանությունից կատարված մեջբերումների էջերն այսուհետև կնշվեն մեջբերման կողքին - Ն.Ս.

⁷ Տե՛ս Ա.Ս. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1977, էջ 623:

Հայերեն - Լուսադեմին փոխադրական սալլեռ հավաքվեցին բերդի հետևը, բերդից դուրս եկան ուղեկցող զինվորները և բոլորը ճանապարհ ընկան: Ժիլինը ծիծիկ էր, իսկ նրա իրերը տանող սալլը գնում էր գումակի հետ (էջ 200):

Татарин բառը թարգմանիչը հայերեն գրել է ոչ թե թաթար, այլ՝ թուրք: «Ռուս-հայերեն բառարանում» татарин բառը հայերեն համարժեք է նշում՝ թաթար⁸:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» թաթար բառի 3-րդ և 4-րդ բացատրական իմաստներն են. 3) Թուրքական լեզվախմբի լեզուներով խոսող և Մերձվոլգյան շրջաններում, Ղրիմում, Սիբիրում ապրող ցեղախումբ: 4) Ադրբեջանցի, ազրի⁹: «Словарь русского языка» բառարանում татарин բառի 2-րդ իմաստն է 2) Название различных татарских, монгольских и некоторых других племен, объединенных в 13-15 вв. в единое государство – Золотую Орду¹⁰:

Լեզվական այս իրողությունների պայմաններում Ստ. Ջորյանը Կովկասի թաթարներին հայերեն կոչել է ոչ թե ադրբեջանցի, ազերի, այլ՝ թուրք:

Рыбакин - Жилин и подумал: «А не уехать ли одному, без солдат? Лошадь подомной добрая, если и нападусь на татар - ускачу» (ստ. 266).

Հայերեն - Ժիլինը մտածեց. «Ի՞նչ կա որ, եթե մենակ, առանց զինվորների գնամ: Տակիս ծին լավն է. եթե թուրքերի հանդիպեմ՝ կըշեն կփախչեմ» (էջ 200):

Հայերենի թարգմանիչը հիմնալի է գտել ռուսերեն բնագրի մտքերի հայերեն համարժեքները. «Жилин видит-дело плохо» (ստ. 267), հայերենում դարձել է «Ժիլինը տեսավ՝ բանը բուրդ է»: Ոչ հնուտ թարգմանիչը կգրեր. «Ժիլինը տեսավ գործը վատ է», սակայն վարպետ թարգմանիչը գտել է մարդու այդ վիճակի համապատասխան հայերեն ժողովրդական արտահայտչաձևը. «Բանը բուրդ է»:

Հրաշալի ձևով գտնված են նաև հետևյալ պարբերության ընդգծված դառնվածների հայերեն համարժեքները:

Հայերեն - «է.- մտածում է Ժիլինը,- ես ձեզ ճանաչում եմ, սպտանի ճուտեր, եթե ողջ ձեռքներն ընկնեմ՝ հորի մեջ կգցեն՝ մտոականվ հոգիս կհանեն: Չէ, կեղանի անձնատուր չեմ լինի» (էջ 201):

Рыбакин - «Ну, - думает Жилин, - знаю вас, чертей, если живого возьмут, посадят в яму, будут плетью пороть. Не дамся же живой» (ստ. 267).

Երբեմն հայերեն թարգմանիչը ռուսերեն արտահայտությունը չի էլ թարգմանում, այլ նույնը գրում է հայերեն տառերով.

⁸ Նույն տեղում, էջ 1216:

⁹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, 2-Ճ, Երևան, 1972, էջ 123:

¹⁰ Словарь русского языка, т 4. С.-Я, Москва, 1988, ст. 342.

Բնագիր - Погода немного, приходит к Жилину ногаец и говорит:

- Айда, хозяин, айда! (ст. 270).

Հայերեն - Քիչ հետո նոդան եկավ Ժիլինի մոտ և ասավ.

- Հայրե, խոգեհն, հայրե (էջ 205):

Մինչդեռ շատ գեղեցիկ հայերենով կարողացել է ներկայացնել Ժիլինի փախուստի այն պահը, որի ժամանակ ռուս սպան ուզում է հնարամտորեն շեղել տանտիրոջ շան ուշադրությունը փախուստի փաստից:

Բնագիր - Услыхал Уляшин, - забрежал и кинулся, а за ним другие собаки. Жилин чуть свистнул, кинул лепешки кусок, Уляшин узнал, замахал хвостом и перестал брехать. Хозяин услышал, загайкал из сабли: «Гайть! Гайть Уляшин!» (ст. 279).

Հայերեն - Քարի չխկոցի վրա Ուլյաշինը հաչեց ու առաջ վազեց, նրա հետևից և ուրիշ շներ: Ժիլինը կամացուկ սուլեց և մի կտոր հաց գցեց՝ Ուլյաշինը ճանաչեց, պոչը շարժեց և ձայնը կտրեց: Տանտերը լսեց և տնից հիս արավ շանը.

-«Քրս, քրս, Ուլյաշին» (էջ 217):

«Կովկասի գերին» ստեղծագործության մեջ Լև Տոլստոյը մերժում է ամեն բռնություն և նրա մերժման արտահայտման գեղարվեստական միջոցը չափազանց համոզիչ է, առավել ևս, որ «Կովկասի գերին» խորագրի տակ կա նշում՝ («եղելություն»): Ուրեմն, պատմվածքի հիմքի մեջ չկա իրավասությունից շեղման որևէ պահ. պարզապես եղելությունը ներկայացվում է վարպետ գրչով և ոչ թե վավերագրողի արձանագրությամբ: Լև Տոլստոյը մոտիկից գիտեր Կովկասն ու այնտեղ ապրող տարբեր ժողովուրդների վարքն ու բարքը, սովորույթները: Դա երևում է նրա մի շարք երկերում, այդ թվում նաև «Կովկասի գերին» գործում: Ի դեպ, պատմվածքում նկարագրված դեպքերը այնքան բնորոշ են Կովկասի լեռնական թուրքերի համար, որ այսօր էլ, մեկ դարից ավելի անցած ժամանակահատվածում, վերստին կրկնվում են՝ կապված քրիստոնյաների՝ հայերի ու ռուսների հետ:

Մարդասիրության արատավոր երևույթին, որ եղել է թուրք մահմեդականների մոտ, Լև Տոլստոյը հակադրում է նրանց կրոնամոլությունը և հանուն ալլահի Մեքքա ուխտ գնալու փաստը: Այդ հատվածը ևս հայերենով լիովին հարազատ հաղորդում է հանճարեղ գրողի միտքը.

Հայերեն - Էդ օրվանից նա ձեռք քաշեց կռվից, գնաց Մեքքա աղոթելու. այդ պատճառով էլ գլխին չալմա է փաթաթում: Իսկ ով Մեքքա ուխտ է գնում՝ «հաջի» է կոչվում և չալմա է փաթաթում: Ծերունին ձեզ՝ ռուսներին չի սիրում: Նա հրամայում է, որ քեզ սպանեն, բայց ես քեզ սպանել չեմ կարող. ես քեզ փողով եմ առել. մեկ էլ որ, Իվան, քեզ սիրեցի, ոչ թե չեմ սպանի, ես քեզ բաց էլ չեի թողնի, չեի ազատի, եթե խոսք տված չլիներ:

Հետո ժիլինի տերը ծիծաղեց ու ասաց ռուսերեն. «Տվոյա, Իվան, խորոշ, մոյա, Աբդուլ, խորոշ» (էջ 213)

Բնագիր - С тех пор он бросил воевать, пошел в Мекку-богу молиться. От этого у него чалма. Кто в Мекке был тот называется хаджи и чалму надевает. Не любит он вашего брата. Он велел тебя убить, да мне нельзя убить, - я за тебя деньги заплатил, да я тебя, Иван, полюбил, я тебя не то что убить, я бы тебя выпускать не стал, кабы слова не дал. - Смеется, сам приговаривает по-русски: «твоя, Иван, хорош, моя, Абдул, хорош!» (ст. 276).

Ինչպես պարզ երևում է այս համեմատության մեջ, հայերենով չկա «Не любит он вашего брата» նախադասությունը: Սա միակ օրինակը չէ, կան նաև ուրիշ բառեր, որոնք նույնպես թարգմանված չեն: Իսկ այդ բառերի բացակայությունից իմաստային փոփոխություն չի կատարվում:

Բերենք նման ևս մեկ օրինակ.

Բնագիր - -Ну, так прощай, - не поминай лихом. Поцеловался с Костылиным (ст. 284).

Հայերեն - - Դե ուրեմն՝ մնաս բարով, - ու համբուրվեց Կաստիլինի հետ (էջ 224):

Հստակ երևում է, որ հայերենում բաց է թողնված «не поминай лихом» արտահայտությունը: Այս դիտարկումները երևան են հանում Լև Տոլստոյի խորին ծանոթությունը Կովկասի լեռնաբնակ ժողովուրդների կյանքին, նրանց կենցաղը ներկայացնող բառերին, որոնք գրողը չի էլ բացատրում, բացի առկ բառից: Գրողը կարողացել է ոճական այնպիսի լեզվամիջոցներ գտնել, որոնք լիովին հնարավոր են դարձնում խոսքի միջոցով ընթերցողին տեղափոխել այն միջավայրը, որում կատարվում են նկարագրվող գործողությունները:

Ստեփան Զորյանի՝ հմուտ թարգմանչի արվեստը հնարավորություն է ընձեռում հայերենի հարուստ լեզվական գանձարանի շնորհիվ ճշգրտորեն գտնել ռուս դասական գրողի լեզվի հայերեն համարժեքները և այնպես տպավորիչ դարձնել պատումը, որ հայերենով «Կովկասի գերին» ընթերցողը չզգա, թե ինքը Լև Տոլստոյին կարդում է թարգմանաբար: